

Կ Ա Ր Գ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓՄԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՑԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆՈՐ ՍՊԱՌՈՂԻ ԿԱՍ ՍՊԱՌՈՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից (այսուհետ՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վերաբերյալ տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն) ներկայացման ընթացակարգը:
2. Տեղեկատվությունը ներկայացվում է եռամսյակային և տարեկան կարգով: 1-3-րդ եռամսյակների տեղեկատվությունը ներկայացվում է մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, իսկ 4-րդ եռամսյակի և տարեկան տեղեկատվությունը՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 15-ը:
3. Ընկերությունը Տեղեկատվությունը ուղեկցող գրությամբ Հանձնաժողով է ներկայացնում առձեռն, փոստային կամ էլեկտրոնային եղանակով:
4. Առձեռն կամ փոստային եղանակով ներկայացման դեպքում Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացվում նաև invest.report@psrc.am էլեկտրոնային հասցեին՝ սույն կարգի 6-րդ կետում նշված ֆորմատներով:
5. Էլեկտրոնային եղանակով Տեղեկատվությունը ներկայացվում է փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգի (Mulberry) կամ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի (www.psrc.am) առցանց հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով: Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի առցանց հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով Տեղեկատվությունը ներկայացվում է Հանձնաժողովի սահմանած կարգով:

6. Փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry) Տեղեկատվությունը ներկայացվում է XLS (իքսել), XLSX (էքսելիքս) կամ ODS (օդիես) ֆորմատների ֆայլերի տեսքով, հայկական unicode (յունիկոդ) տառատեսակով, իսկ այլ տվյալներ ներկայացնելու համար կիրառելի են DOC (դոկ), DOCX (դոկիքս) կամ PDF (փիդիէֆ) ֆորմատները:
7. Առձեռն եղանակով ներկայացման դեպքում Տեղեկատվության ներկայացման օր է համարվում Հանձնաժողովում Տեղեկատվության և ուղեկցող գրության փաստացի մուտքագրման օրը, փոստային եղանակով ներկայացման դեպքում՝ Տեղեկատվության և ուղեկցող գրության փոստային բաժանմունքում ընդունվելու օրվա օրացուցային կնիքի արտատիպում նշված օրը, փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry) ներկայացման դեպքում՝ Տեղեկատվության և ուղեկցող գրության էլեկտրոնային առաքման օրը, իսկ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի առցանց դիմումների և հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացման դեպքում՝ այդ համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով հաշվետվություններ ներկայացրած անձին հաշվետվությունների ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան էլեկտրոնային ծանուցման մեջ նշված օրը:
8. Հանձնաժողով ներկայացված Տեղեկատվությունում սահմանված ձևերին անհամապատասխանությունների, անճշտությունների կամ բացթողումների առկայության դեպքում Ընկերությունը Հանձնաժողովի կողմից տեղեկացվում է այդ մասին և տեղեկացվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով է ներկայացնում ճշգրտված Տեղեկատվություն կամ Տեղեկատվության առնչվող լրացուցիչ պարզաբանումներ:
9. Տեղեկատվության կազմման համար անհրաժեշտ սկզբնական հաշվառման փաստաթղթերում անորոշությունների, անճշտությունների և այլ վիճահարույց տվյալների առկայության, կամ տարբեր պատճառներով այդ փաստաթղթերի վավերացված չլինելու դեպքում Ընկերությունը սկզբնական հաշվառման առկա փաստաթղթերի կամ իր կողմից առավել արժանահավատ համարվող ցուցանիշների հիման վրա լրացնում և Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում Տեղեկատվությունը ներկայացնում է Հանձնաժողով, իսկ հետագայում նոր հիմնավոր փաստերի առկայության կամ սկզբնական հաշվառման փաստաթղթերում

փոփոխությունների կատարման դեպքում Տեղեկատվությունում կատարում է փոփոխություններ և Հանձնաժողով է ներկայացնում ճշգրտված Տեղեկատվություն:

10. Հանձնաժողով ներկայացված Տեղեկատվությունում Ընկերության կողմից սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում ևս վերջինս կարող է ներկայացնել ճշգրտված Տեղեկատվություն: Սույն կարգի կիրառության իմաստով՝ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված մեկից ավելի Տեղեկատվությունից առաջինը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված, իսկ մյուսները՝ ճշգրտված:

Տեղեկատվություն նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման ժամկետների վերաբերյալ

առ _____ 20.. թվական

| № | Դիմողի անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անուն ազգանունը) | Դիմելու ամսաթիվը | Միջնորդ հետախուստահանումը | Մարզը, համայնքը, բնակավայրը, հասցեն | Պատկանելի էլեկտրակայանը (կՎԷ) | Կառուցվող տեղակայանքների առավելագույն արժանի անվանարժեքը (կՎԷ) | Էլեկտրական ցանցին միացման տեսակը (պարզեցված կամ այլ) | Վերականգնվող էներգիայի աղբյուրները (ՄԷԿ, ՄԷԿԿ, ՄԷԿԿԿ, ՄԷԿԿԿԿ, ՄԷԿԿԿԿԿ, ՄԷԿԿԿԿԿԿ) | Միացման պայմանագիրը դիմողին ստանալու ամսաթիվը | Միացման պայմանագրի հասցեն | Միջոցառման արդյունքում ձևավորված նախագծման ժամկետը (օր) | Փաստաթղթի նախագծման ժամկետը (օր) | Էլեկտրական ցանցին միացման արձեռնարկի լիարժեքացման ժամկետը (օր) | Էլեկտրական ենթակառուցվածքի մատակարարման պայմանագրի կնքելու ամսաթիվը (օր) | Միացման վճար մար. ՀՀ դրամ, առանց ՍԱՀ | Փաստացի վճարում (առանց ՍԱՀ) | Միջնորդը ընդունելի վերադառնալու փուլում | Նշումներ | |
|----|--|------------------|---------------------------|-------------------------------------|-------------------------------|--|--|--|---|---------------------------|---|----------------------------------|--|--|--------------------------------------|-----------------------------|---|----------|--|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | |
| 1 | 0.22 կՎ լարման ցանցին միացող սպառողներ | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | 0.4 կՎ լարման ցանցին միացող սպառողներ | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | 6(10) կՎ լարման ցանցին միացող սպառողներ | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | 35 կՎ լարման ցանցին միացող սպառողներ | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 5 | 110 կՎ լարման ցանցին միացվող սպառողներ | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 6 | 220 կՎ լարման ցանցին միացող սպառողներ | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 7 | Բազմաբնակարան շենքեր կամ թաղամասեր | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8 | Պահուստային սնուցում | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | | |

- Տեղեկատվությունը ներկայացվում է 2008 թվականի փետրվարի 1-ից մինչև հաշվետու եռամսյակի վերջին օրը էլեկտրական ցանցին միանալու դիմում ներկայացրած և հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ մատակարարման պայմանագիր չկնքած դիմողների մասով:
- Տեղեկատվության 9-րդ, 10-րդ և 11-րդ սյունակներում 01.07.2017 թվականից հետո ստացված դիմումների համար լրացվում է էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական ենթակառուցվածքի մատակարարման պայմանագրի մատով, իսկ բազմաբնակարան շենքերի և թաղամասերի դեպքում՝ կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագրի մատով:
- Տեղեկատվության 12-րդ և 13-րդ սյունակները լրացվում են, եթե միացման արձեռնարկների համար անհրաժեշտ է մշակել նախագիծ:
- Տեղեկատվության 15-րդ սյունակում լրացվում է էլեկտրական ենթակառուցվածքի մատակարարման պայմանագրի կնքելու ամսաթիվը, իսկ էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական ենթակառուցվածքի մատակարարման պայմանագրի կնքման դեպքում՝ փաստացի էլեկտրամատակարարման արժեքները:
- Ամսաթիվը պարունակող սյունակները լրացվում են "DATE" 31/12/17 ձևաչափով:

Տեղեկատվություն նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման նպատակով իրականացվող ծախսումների վերաբերյալ

առ _____ 20.. թվական

| № | Դիմողի անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անուն ազգանունը) | Մտերը, համայնքը, բնակավայրը, հասցեն | Պահանջվող հզորությունը (կՎԱ) | Կառուցվող գծի երկարությունը (կմ) և մակիճը | Կառուցվող տրանսֆորմատորային ենթակայանի հզորությունը (կՎԱ) | Միացման պայմանագրի համարը | Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքելու առաջարկություն ներկայացնելու ամսաթիվը | Ստանդարտ վճար (հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ) ^a | Լրացուցիչ/Պահուստային վճար (հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ) ^b | Միացման վճար (հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ) ^{c=a+b} | Միացման նախախաշվային աղբյուր (հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ) | Միացման նպատակով իրականացված փաստացի ծախսումներ (հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ) | Փաստացի վճարում (հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ) | Փաստացի վճարումն ամսաթիվը | Նշումներ |
|----|--|-------------------------------------|------------------------------|---|---|---------------------------|--|---|--|--|---|--|--|---------------------------|----------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 1 | 0.22 կՎ լարման ցանցին միացող սպառողներ | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | |
| 2 | 0.4 կՎ լարման ցանցին միացող սպառողներ | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | |
| 3 | 6(10) կՎ լարման ցանցին միացող սպառողներ | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | |
| 4 | 35 կՎ լարման ցանցին միացող սպառողներ | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | |
| 5 | 110 կՎ լարման ցանցին միացվող սպառողներ | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | |
| 6 | 220 կՎ լարման ցանցին միացող սպառողներ | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | |
| 7 | Բազմաբնակարան շենքեր կամ թաղամասեր | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | |
| 8 | Պահուստային սնուցում | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | |

- Տեղեկատվությունը ներկայացվում է հաշվետու եռամսյակի ընթացքում էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքած կամ փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովված դիմողների մասով:
- Տեղեկատվության 7-րդ սյունակում 01.07.2017 թվականից հետո ստացված դիմումների համար լրացվում է էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի համարը, իսկ բազմաբնակարան շենքերի և թաղամասերի դեպքում՝ կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագրի համարը:
- Տեղեկատվության 8-րդ սյունակում լրացվում է էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքելու առաջարկություն ներկայացնելու ամսաթիվը, իսկ էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման դեպքում՝ փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու ամսաթիվը: